

Այս դասի (դասի տեքստ + մոտիվացնող
ներածական տեսանյութ + բառարան +
ինքնաստուգիչ հարցեր + առաջադրանք)
յուրացման համար հարկավոր է **360**
րոպե/6 ժամ:

ԴԱՍ 7

ՊԵՐՃԱԽՈՍԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐ: ԵԼՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(կարող եք գտնել հեռաուսուցման փաթեթի կրիչում)

Այս դասի ընթացքում Դուք կշարունակեք ծանոթությունը պերճախոսական հնարների հետ:

Կուսումնասիրեք՝

- **բումերանգ** կամ **հակադարձ հարված**,
- **հիպերբոլա (չափազանցում)** և **մեյոզիս (նվազեցում)** հնարները,

կծանոթանաք՝

- փաստարկման ընթացքում և հաղորդակցական գործընթացներում հումորի ու սրամտության հնարավորություններին,
- ճառի կառուցման մի շարք եղանակների:

Ցուցումներ



Մինչև 15 րոպե

Ուշադրությամբ կարդացեք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցեք հաջորդմասերին /ինքնաստուգիչ հարցեր, առաջադրանք/:



Մինչև 120 րոպե

7.1. ԲՈՒՄԵՐԱՆԳ ԿԱՄ ՀԱԿԱԴԱՐՁ ՀԱՐՎԱԾ

Տվյալ հնարի էությունն այն է, որ ընդդիմախոսի դրույթը, փաստարկը, անգամ ռեպլիկը շուտ է տրվում և գործածվում նրա դեմ: Կրկնապատկվում է փաստարկի ուժը և ներկաների վրա թողած տպավորությունը: Բարդ վիճակի մեջ է հայտնվում ընդդիմախոսը, լսարանի համար ակնհայտ է դառնում նրա ոչ նախանձելի վիճակը:

Մեկ օրինակ բուհական առօրյայից: Ուսանողը բողոքում է. «Մի՞թե ես «երկուսի» եմ արժանի»: Դասախոսը պատասխանում է. «Ճիշտ է, բարեկամս, Դուք իրոք «երկուսի» արժանի չեք: Ցավոք, գնահատման տվյալ համակարգում դրանից ավելի ցածր գնահատական գոյություն չունի»:

Մեկ այլ օրինակ՝ քաղաքական բանավեճից:

1993 թ. հայկական հեռուստատեսության եթերում բանավեճ էր ծավալվել մի իշխանավորի և ընդդիմադիր գործչի միջև: Բանավեճի թեման Հայաստանում տնտեսական, քաղաքական և սոցիալական կայունության անկայունության հարցն էր: Իշխանության ներկայացուցիչը պնդում էր, որ Հայաստանում իրավիճակը կայուն է, կան նաև առաջընթաց քայլեր ու որոշ ձեռքբերումներ: Ընդդիմախոսն առարկում էր իշխանավորի փաստարկները՝ պնդելով հակառակը: Նա նկատեց, որ մեր հասարակությունը իջել-հասել է անդունդի հատակին և այլևս ընկնելու տեղ չկա, և որ մահացած մարդու վիճակն ամենակայունն է, սակայն որևէ ողջախոհ մարդ չի նախանձի այդպիսի կայունությանը:

Բանը հասավ նրան, որ իշխանավորն իր ընդդիմախոսին մեղադրեց քաղաքական մագոխիզմի, գույները մռայլ երանգներով ներկայացնելու մեջ: Նա առաջարկեց երկրի և իշխանությունների ձեռքբերումները նկատելու համար Հայաստանում առկա իրավիճակը



համեմատել հարևան Ադրբեջանի հետ, որտեղ Սուրեթ Հուսեյնովը ապստամբել էր Աբուլֆազ Էլչիբեյի իշխանության դեմ և Ադրբեջանը հայտնվել էր երկիշխանության ու քաղաքական ճգնաժամի մեջ: Առաջարկեց համեմատել Հայաստանում գործող Էլեկտրաէներգիայի հովհարային մատակարարման երկժամանոց գրաֆիկը Վրաստանում գործող 20-րոպեանոց գրաֆիկի հետ: Առաջարկեց նաև համեմատություն անցկացնել Հայաստանում ձևավորված չքավոր խավի և Կիևի փողոցներում թափառող շներ ու կատուներ որսացող անտունների միջև: Ի վերջո առաջարկեց հետևյալ ձևակերպումը.

- Դրսից Հայաստանի ձեռքբերումներն ավելի լավ են երևում, ակնհայտ են և տպավորիչ:

Ընդդիմախոսը դիմեց բումերանգի.

- Հավանաբար Դուք ճիշտ եք, ասելով, որ դրսից Հայաստանի ձեռքբերումներն ու առաջընթացն առավել ակնհայտ են: Թերևս դրանով պետք է բացատրել այն փաստը, որ մեր համաքաղաքացիների կեսից ավելին լքել է հայրենիքը, դրսից գմայլվում է նրա ձեռքբերումներով և ոչ մի կերպ չի ցանկանում վերադառնալ Հայաստան:

7.2. ՀԻՊԵՐԲՈՒԱՆԵՐ ԵՎ ՄԵՑՈՉԻՄՆԵՐ

Հիպերբոլան բնութագրվող երևույթի որոշ հատկությունների չափազանցումն է: Օրինակ՝ *«ամբողջ աշխարհն է տեղյակ այդ մասին», «հազար անգամ քաղաքացին զգուշացվել էր չթույլատրված հատվածներում փողոցն անցնելու վտանգավորության մասին, սակայն՝ ապարդյուն»:*

Այս հնարը հմտորեն գործածում են փորձառու հոեատորները, երբեմն էլ այն համադրելով այլ հնարների, օրինակ՝ *իրոնիայի* հետ: Դիտարկենք մի դրվագ Ֆ.Պլևակոյի ճառից. «Որպեսզի ընդունենք այդ դրդապատճառի իրական լինելը, պետք է ընդունենք, թե

Փորձեք ձևակերպել այլ օրինակներ ևս:

մարդկային բնությունն այնքան նողկալի է, որ մարդիկ հանցագործություններ չեն կատարում միայն այն բանի շնորհիվ, որ նրանց ձեռքերն ու բոլոր մատները կաշկանդված են օրենքի շղթաներով, և այդ շղթաները, ի դեմս ուրյադնիկների ու ոստիկանների, դարեդար պահպանում են Ռուսական կայսրությունն իրենց բարոյականությամբ» [մեջբ. ըստ Петров 2004: 95]:

Հիպերբոլյան հաճախ հանդիպում է գովաբանական խոսքում: Քվինտիլյանուսը Ցիցերոնի մասին ասել է. «Երկինքը Ցիցերոնին երկիր է ուղարկել, ըստ երևույթին, նրա համար, որպեսզի նրանով օրինակ տա, թե ինչ աստիճանի գորեղ կարող է լինել խոսքը: ... Միանգամայն արդարացիորեն ժամանակակիցները նրան անվանեցին դատական ճարտասանության արքա»:

Մեյոզիսը (նվագեցում կամ նվագաբանություն) բնութագրվող երևույթի որոշ հատկությունների մտածված նվագեցումն է, երևույթի թերևությունը, փոքրությունը, խնդրի հեշտությունը ընդգծելու նպատակով: Օրինակ՝ «մի բուռ հայրենիք», «մի մատ երեխա», «իրավարան դառնայր բարդ գործ չէ. պարզապես հարկավոր է մի երկու օրենսգիրք իմանալ» և այլն:

7.3. ՀՈՒՄՈՐՆ ՈՒ ՍՐԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՍՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՄԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Ելույթը տպավորիչ ու ազդեցիկ դարձնելու գորեղ միջոցներ են հումորն ու սրամտությունը: Ճիշտ գործածման դեպքում դրանք արդյունավետ կարող են լինել հետևյալ խնդիրները լուծելու առումով.

- ա) աշխուժացնել հաղորդակցումը, բարենպաստ մթնոլորտ ձևավորել լսարանում,
- բ) լիցքաթափել լարվածությունը լսարանում կամ կողմերի միջև,
- գ) բարդ և խճճված հարցը պարզ ու հասկանալի



Փորձեք ձևակերպել այլ օրինակներ ևս:

մատուցել,

դ) հաղթահարել հոգեբանական արգելքները, հաղորդակցումը դարձնել դյուրին և հաճելի,

ե) բացահայտել ընդդիմախոսի թերությունները, քննադատել և անել դիտողություններ,

զ) էլք գտնել բարդ իրավիճակներից,

է) դիմագրավել ընդդիմախոսի քննադատությունը և պաշտպանվել:

Մ.թ.ա. 5-4-րդ դարերի նշանավոր փիլիսոփա Դիոգենես Սինոպացուն ասում են. *«Շատերը ծիծաղում են քեզ վրա»:* Նա պատասխանում է. *«Իսկ նրանց վրա ավանակներն են ծիծաղում: Բայց ինչպես նրանք ուշադրություն չեն դարձնում ավանակներին, այդպես էլ ես արհամարհում եմ ինձ վրա ծիծաղողներին»* [Диоген из Синопта 2015: <http://biograpedia.ru/node/444>]:



Քննադատելով Ուինսթոն Չերչիլի վարած քաղաքականությունը՝ նրա կին ընդդիմախոսը հավելեց, նետելով. *«Դուք որպես մարդ ևս շատ անտանելի անձնավորություն եք: Եթե ես Ձեր կինը լինեի, հաճույքով թույն կլցնեի Ձեր սուրճի բաժակում»:* Չերչիլը պատասխանում է. *«Եթե Դուք իմ կինը լինեիք, տիկին, ես մեծ հաճույքով կխմեի այդ թույնը»:*



Հումորն ու սրամտությունն, իհարկե, խրախուսելի են չափի մեջ: Պետք է զգույշ լինել էթիկական և գեղագիտական սկզբունքները չխախտելու համար:

«Մրախոսությունը մտքի ամենահաճելի և ամենավտանգավոր հատկությունն է: Նուրբ կատակը միշտ հաճելի է մարդկանց, բայց և մարդիկ խուսափում են նրանից, ով չափից շատ է կատակում»:

Դժվար է կատակող միտք ունենալ և խուսափել խեղկատակ կամ ծաղրող երևալուց: Չափի զգացում պետք է ունենալ...» [ԼաոռչՖուկո Ֆ. դր, Մաքսիմներ և բարոյախոսական խորհրդածություններ: Եր., էջ 196]:

Պետք է խուսափել հուժկու հեղանքի ու բացահայտ ծաղրի վերածելուց: Ծաղրը անտակտության, մտքի աղքատության նշան է և սովորաբար գործի է դրվում, երբ չեն բավարարում կամ բացակայում են տրամաբանական ապացույցները:

7.4. ՃԱՌԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ինչպե՞ս շարադրել մտքերը, սեփական փաստարկներն ու դատողությունները, ի՞նչ հերթականությամբ ու սկզբունքով: Ինչպե՞ս սկսել և ինչպե՞ս ավարտել ելույթը:

Դեյլ Քարնեգիի բնորոշմամբ՝ սա այն հավերժական հարցն է, որը յուրաքանչյուր հոետոր ամեն կոնկրետ իրավիճակում պետք է լուծի յուրովի: Անհնար է առաջարկել մանրամասն, անթերի կանոններ ու օրենքներ բոլոր դեպքերի համար [տե՛ս Карнеги 1989: 56]:

Դա չի նշանակում, սակայն, որ հնարավոր չէ այս հարցի կապակցությամբ մեթոդաբանական սկզբունքներ ու մոտեցումներ մշակել:

Կարելի է առանձնացնել, օրինակ, ճառի կառուցման **«աճող», «նվազող», «աճող-նվազող», «նվազող-աճող», համակողմանի և հակափաստարկման** սկզբունքները:

«Աճող» սկզբունքով ճառը կառուցելիս փաստարկները ներկայացվում են ըստ համոզական ուժի, հուզական ու տրամաբանական ազդեցության ավելացման: Վերջում ներկայացվում են ամենաձանրակշիռ ու ամենատպավորիչ փաստարկները, որոնք կարող են հիմք հանդիսանալ ամփոփիչ եզրակացության, հայտարարության կամ կոչի համար:

Փաստարկման և ճառի կառուցման տվյալ տարբե-

Հատուկ ուշադրություն դարձրեք ճառի կառուցման սկզբունքներին:

Փորձեք մտաբերել նմանատիպ ճառեր Ձեր պրակտիկայից:

րակն ապահովում է զգացմունքների աստիճանաբար թեժացում, խոսքի համոզիչ ներգործության ավելացում, քննարկվող հարցի գիտակցման հետզհետե ավելացում: Այս եղանակը գործածական է այն դեպքում, երբ կա հաղորդակցման համար բարենպաստ մթնոլորտ և բավականաչափ ժամանակ: Այն առավել արդյունավետ է բարդ հարցերի քննարկման դեպքում, երբ հոետորի ընդդիմախոսն ու ունկնդիրները շահագրգռված են խորանալ հարցի էության մեջ, ինչպես նաև, եթե հոետորը լսարանում ունի լուրջ հեղինակություն, վստահ է իր գիտելիքների ու հմտությունների վրա, համոզված է հաջողության մեջ, ինչը հնարավորություն է տալիս չտապել և հանգամանալից շարադրել սեփական տեսակետը՝ գնալով պարզից (առանձին դրվագների վերլուծությունից) դեպի բարդի (գլխավորի) բացահայտումն ու ապացուցումը:

Ելույթը «նվազող» փաստարկման սկզբունքով կառուցելու դեպքում սկզբից բերվում են առավել ուժեղ, ծանրակշիռ ու համոզիչ փաստարկները: Կարող են հնչել նաև ուշագրավ, անսպասելի կամ ցնցող հայտարարություններ, գնահատականներ, դիրքորոշումներ: Այս հետևում են առավել զուսպ՝ առաջինները մեկնաբանող ու հիմնավորող դրույթները՝ ըստ ներգործության աստիճանի նվազման: Ելույթի կառուցման այս եղանակը նախընտրելի է այն դեպքերում, երբ լսարանում կա անորոշություն, ներկաներն այնքան էլ հետաքրքրված չեն քննարկվող առարկայով, սուղ է ժամանակը, կամ էլ ելույթ ունեցողն անծանոթ է (դեռևս հեղինակություն չէ) լսարանի համար: Այդպիսի պայմաններում ներկաների հետաքրքրությունը գրգռելու, ուշադրությունը գրավելու համար հարկավոր է անակնկալի բերել, զարմացնել խիստ տրամաբանական կշռադատություններով, ծանրակշիռ փաստարկներով, սուր ու ինքնատիպ հարցադրումներով:

Ելույթի կառուցման «անող-նվազող» եղանակի

Փորձեք մտաբերել նմանատիպ ճառեր Ձեր պրակտիկայից:

Փորձեք մտաբերել նման

դեպքում աստիճանաբար մեծացնելով խոսքի համոզչական ներգործությունն ու տպավորությունը՝ հասնում են առավելագույն փոխըմբռնման և հուզական լարվածության, ապա, աստիճանաբար թուլացնելով ձևավորված մթնոլորտը, լիցքաթափում այն: Այս միջոցն առավել նախընտրելի է լսարանում անկումային տրամադրությունների առկայության պարագայում կամ էլ կոնֆլիկտային իրավիճակներում:

Ելույթը «նվազող-աճող» տարբերակով կառուցելիս այն սկսում են անսպասելի, ցնցող հայտարարությամբ, առավել ուշագրավ դրույթներով, ապա բերվում են այդ հայտարարությունն ու դրույթները հիմնավորող, մեկնաբանող փաստարկներ: Հնարավորություն է տրվում զրուցակցին կամ ունկնդիրներին հաղթահարելու առաջին «շոկային» տպավորությունը, ապա շարունակում են նորից ավելացնել ազդեցությունը, խորացնել, ընդլայնել ու մեկնաբանել հաղորդված ինֆորմացիան: Այս դեպքում ևս ելույթը կարող է ավարտվել ամփոփիչ պնդումով, հայտարարությամբ կամ կոչով: Ճանի կառուցման այս եղանակն արդյունավետ է ժողովներում, միտինգային իրավիճակներում, նաև այն դեպքերում, երբ լսարանն աչքի է ընկնում տարասեռ կազմով, կարծիքների ու տրամադրությունների բազմազանությամբ:

Համակողմանի փաստարկումը նախընտրելի է այն պարագայում, երբ քննարկվող հարցի վերաբերյալ առկա են կամ կարող են լինել մեկից ավելի այլընտրանքային ու իրարամերժ տեսակետներ: Ելույթը կառուցվում է այդ տեսակետների զուգադրության, դրանց առավելությունների և թերությունների ներկայացման ու վերլուծության եղանակով: Համեմատական վերլուծության ֆոնի վրա հռետորն առանձնացնում ու ընդգծում է սեփական տեսակետը, հիմնավորում դրա նպատակահարմարությունն ու ճշմարտացիությունը: Որոշ դեպքերում էլ նման վերլուծությունից ու տեսակետների զուգադրումից հետո ընտրությունն ու եզրակա-

նատիպ ճառեր Ձեր պրակտիկայից:

Փորձեք մտաբերել նմանատիպ ճառեր Ձեր պրակտիկայից:

Փորձեք մտաբերել նմանատիպ ճառեր Ձեր պրակտիկայից:

ցությունը թողնվում է լսարանին:

Հակափաստարկման սկզբունքով ելույթը կառուցվում է կազմակերպվել երկու դեպքերում:

Առաջին դեպքում հակափաստարկողը հետևում է հակառակ կողմի ելույթին և իր խոսքը կառուցում է նրա փաստարկների, դրույթների վիճարկման ու դրանք ժխտող հակափաստարկների ներկայացման սկզբունքով: Այդ եղանակով են կառուցվում, օրինակ, գիտական ատենախոսության պաշտպանության ընթացքում ատենախոսի՝ ընդդիմախոսի դիտողություններին ի պատասխան ելույթը, դատարանում ներկայացված մեղադրանքին ի պատասխան հնչող պաշտպանական ելույթը: Տվյալ դեպքում ելույթի կառուցվածքը հիմնականում պայմանավորված է լինում նախորդ ելույթի բովանդակությամբ: Հակափաստարկման հետևողական բնույթը, ընդդիմախոսի փաստարկներին հաջորդաբար անդրադառնալն ու դրանք չըջանցելը երաշխավորում են լսարանի վստահությունն ու համակրանքը:

Երկրորդ դեպքում հակափաստարկման սկզբունքով ելույթը նախընտրելի է, երբ լսարանում արդեն իսկ առկա է որոշակի համոզմունք և նախատրամադրվածություն: Այդպիսի իրավիճակներում, մինչև սեփական դրույթի փաստարկմանն անցնելը, խորհուրդ է տրվում նախ վիճարկել և քննադատել տիրապետող կարծիքը, ցույց տալ դրա թերությունները և լսարանի մոտ կասկած (թերահավատություն կամ հիասթափություն) հարուցել դրա ճշմարտացիության և նպատակահարմարության վերաբերյալ: Եվ այն ժամանակ, երբ լսարանը այլևս վստահ չէ իր դիրքորոշման մեջ և պատրաստ է առավել ընդունելի դրույթի առկայության պարագայում վերանայել իր տեսակետը, կարելի է անցնել սեփական տեսակետի փաստարկմանն ու հիմնավորմանը:

Ընդհանուր առմամբ դատական ճառի *կառուցվածքի* որևէ մշտական, կայուն ձև գոյություն չունի [Արև-

շատյան Ս.Ղ., Հոեւոորակաւն արվեստի հիմնութները, Եր., 1961, էջ 136]: Այս հարցում Էական դեր ունեն ստեղծված իրավիճակը, էլոյթ ունեցողի ինքնատիպ մտածելակերպն ու անհատական որակները, նրա ստեղծագործական երևակայությունը: Առավել ընդհանրական մոտեցման դեպքում դատական ճառի, ինչպես նաև հրապարակային ցանկացած այլ էլոյթի համար կարելի է առանձնացնել երեք մասեր՝ *ներածություն* (մուտք, նախաբան), *հիմնական մաս* և *ամփոփում* (եզրահանգում, վերջաբան):

Ներածությունը, որը բնականաբար ենթադրում է խոսքի հասցեագրում դատարանին ու դատական գործընթացի մասնակիցներին, կարող է սկսվել հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանի ներկայացմամբ, գործի փաստական հանգամանքների, եղելության շարադրանքով, կատարված փաստի արձանագրմամբ և դրա հուզական, բարոյահոգեբանական կամ իրավական գնահատականներով, մեղադրյալի բնութագրմամբ և այլն:

Հիմնական մասը, որն ընդհանուր առմամբ բաղկացած է դեպքի վերլուծություն, հանցագործության դասակարգում, պատժաչափի առաջադրում-հիմնավորում մասերից, կարող է ընդգրկել նաև հանցագործության կատարման պայմանների ու պատճառների վերլուծություն, մեղադրյալի (հայցողի, պատասխանողի) անձի մասին տեղեկատվություն:

Ամփոփումը պետք է ի մի բերի ասելիքը, ընդգծի գլխավոր եզրակացությունները: Եթե էլոյթի սկզբում կարևորը ուշադրություն գրավելն է, ապա ամփոփման մեջ կարևոր է ընդգծել ասվածի նշանակությունը և դիրքորոշում ձևավորել:

Խնդիր չդնելով մանրամասն քննարկել էլոյթի հնարավոր կառուցվածքի բոլոր տարբերակները՝ այնուհանդերձ, կարևոր ենք համարում ներկայացնել նշված

բաղադրիչների համար մի քանի առանցքային պահանջներ ու խորհուրդներ:

- Ներածությունը նախընտրելի է գրել վերջում, երբ արդեն պատրաստ են ելույթի հիմնական մասն ու եզրակացությունը:

- Մնիրաժեշտ է խուսափել ինչպես խիստ ծամծամված, այնպես էլ շատ արտառոց (էքստրավագանտ) ներածությունից:

- Մերողջ ելույթի ընթացքում պետք է պահպանել պարզության ու հասկանալիության, ինչպես նաև որոշակիության, անհակասականության, հետևողականության և բավարար հիմնավորվածության պահանջները:

- Կարևոր է ամփոփումը կառուցել և մատուցել այնպես, որ ունկնդիրները զգան՝ այլևս ասելու բան չկա:

Այս դասի ընթացքում Դուք հնարավորություն ունեցաք հարստացնելու՝

- պերճախոսական հնարների մասին Ձեր իմացությունը, ծանոթացաք՝
 - ելույթի ընթացքում փաստարկների մատուցման հաջորդականությամբ պայմանավորված փաստարկողական համակարգի վեց տարբերակների,
 - ճառի հիմնական բաղադրիչ մասերի նկարագրին ու դրանց ներկայացվող պահանջներին:

Հատուկ ուշադրություն դարձրեք խորհուրդներին:

